ՄԻ ԴՐՎԱԳ 1173 Թ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

ՆԵԼԼԻ ԺԱՄԿՈՉՅԱՆ

Բանալի բառեր – Կիլիկիա, Հռոմկլա, կաթողիկոսարան, իշխանապետ, եպիսկոպոս, հոգևորական, պատմիչ, հետազոտող, եկեղեցի, ընտրություն, պատմություն, ռազմական ուժ:

ՄՈՒՏՔ

XII դարի 70-ական թվականները Կիլիկիայի հայոց իշխանապետության ամենակարևոր և հետաքրքիր ժամանակաշրջաններից է, քանզի այն բավականին մեծ կարևորություն ունի Հայ առաքելական եկեղեցու պատմության և մասնավորապես Հռոմկլայի կաթողիկոսարանի և Կիլիկիայի հայկական պետության փոխհարաբերությունների ուսումնասիրության համար: Այս հիմնահարցերի առանձին դրվագներ առ այսօր խորազնին ուսումնասիրված չեն և դրանցից մի քանիսին սպառիչ պատասխաններ չեն տրվել, մեր ներկա հետազոտությունը նվիրված է այդ բացը լրացնելու համար: Մեր հետազոտությունն իրականացնելիս խնդիր ենք դրել ուսումնասիրելու հետևյալ հարցերը.

Ա. Եկեղեցաքաղաքական իրավիճակը Հռոմկլայի հայրապետանոցում և Կիլիկիան Հայաստանում 1173թ.:

Բ. Ներսես Շնորհալու մահվանից հետո կաթողիկոսական աթոռի համար մղված պայքարի մանրամասները:

Գ. Փորձել ենք վեր հանել Մլեհ իշխանապետի և Հալեպի տիրակալ Նուր-ադ-Դինի խաղացած դերը Գրիգոր Դ Տղայի Կաթողիկոս հռչակվելու գործում:

Մեր նպատակին հասնելու համար ուսումնասիրության մեջ օգտագործել ենք միջնադարյան ժամանակաշրջանի աղբյուրներ և ժամանակակից գիտական գրականություն:

1. ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼՈՒ ՄԱՀԸ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԱԹՈՌԻ ՀԱՄԱՐ ՊԱՅՔԱՐԸ

1166-1173 թթ. Ամենայն հայոց կաթողիկոսը միջնադարյան խոշոր մտածող, բանաստեղծ, պատմիչ, աստվածաբան և անվանի հոգևորական

Ներսես Շնորհալին էր, ով մեծ անուն թողեց թե Հայ առաքելական եկեղեցու և թե ընդհանուր եկեղեցական պատմության մեջ[1]:

1173 թ. մահացավ Ներսես Շնորհալին, ինչը ծանր հարված էր թե՛ Հայ առաքելական եկեղեցուն և թե՛ Կիլիկիայի հայոց իշխանապետությանը. «Ի թուին հայոց ՈԻԲ (1173) ի յաւգուստոս ժգ (13)ի հինգշաբթի փոխեցաւ առ Քրիստոս սրբազան կաթողիկոսն հայոց տէր Ներսէս…»[2]: Նրա մահը սգում էր ոչ միայն հայ ժողովուրդը, այլև ամբողջ քրիստոնյա աշխարհը: Չմոռանանք նաև նշել, որ պատմական այս կարևոր ժամանակահատվածում Կիլիկիայի հայոց պետությունը ղեկավարում էր Մլեհ Ռուբինյանը, ով պատմության մեջ մնաց որպես հզոր, ուժեղ և ինքնատիպ արտաքին քաղաքականություն վարող անձնավորություն:

Քննարկվող ժամանակաշրջանում բավականին սերտ փոխհարաբերություններ կային Հռոմկլայի հայոց կաթողիկոսարանի և Կիլիկիայի հայոց պետության միջև: Բացի այդ սա մի ժամանակաշրջան է երբ բավականին ակտիվ կերպով ընթանում էին հայ և հույն հոգևորականների միջև բանակցությունները եկեղեցիների միավորման շուրջ: Մյուս կողմից էլ հարկ է նշել, որ Մլեհ իշխանապետը, հավանաբար, վստահելով Ներսես Շնորհալուն, չի միջամտել Հռոմկլայի հայոց կաթողիկոսարանի ներքին գործերին:

Ցավոք միջնադարյան պատմիչների աշխատություններում չեն պահպանվել որևէ տեղեկություններ հայոց իշխանապետի և կաթողիկոսի հարաբերությունների մասին: Այդ մասին կարծիք է հայտնում Մաղաքիա Օրմանյանը. վերջինս գտնում է, որ ո՛չ Ներսես Շնորհալին է միջամտել հայոց իշխանապետի գործերին և ո՛չ էլ Մլեհ Ռուբինյանը նրա եկեղեցական գործերին[3]:

Ներսես Շնորհալու վախճանից հետո առաջ եկավ Ամենայն Հայոց կաթողիկոսի ընտրության խնդիրը և այդ մասին մեզ որոշակի տեղեկություններ են հայտնում միջնադարյան հայ և օտարազգի պատմիչները, որոնց աշխատություններում, սակայն, առկա են որոշ անճշտություններ և

---

[1] Կաթոլիկ աստվածաբան Կղեմես Գալանոսի վկայությամբ՝ Ներսես Շնորհալին բոլորից բարձր մեծահռչակ բանաստեղծն էր, որը տաղաչափական արվեստում այնքան հմտացավ, որ արժանի է համարվել լավագույնը ոչ միայն հայերի, այլև հույների և լատինների շրջանում: Տե՛ս **Կղեմես Գալանոս**, Միաբանութիւն Հայոց Սուրբ եկեղեցւոյն ընդ մեծի Սուրբ եկեղեցւոյն Հռովմայ, հ. 1, Հռոմ, 1650, էջ 239:

[2] **Մաթևոսյան Կ.**, Հեթում պատմիչ Կոռիկոսցին և նրա ժամանակագրությունը, Երևան, 2011, էջ 48: Այդ մասին տե՛ս նաև **Բոզոյան Ա.**, Բյուզանդիայի արևելյան քաղաքականությունը և Կիլիկյան Հայաստանը ԺԲ դարի 30-70-ական թվականներին, Երևան, 1988, էջ 246, *նույնի՝* Հայ-բյուզանդական եկեղեցական բանակցությունների վավերագրերը (1165-1178), Երևան, 1995, էջ 137:

[3] **Օրմանյան Մ.**, Ազգապատում, հ. Ա, Ս. Էջմիածին, 2001, սյուն 1660:

տարբերություններ: Սույն խնդրին առնչվող տեղեկություններ մեզ հայտնում են միջնադարյան պատմիչներ Միքայել Ասորին, Սմբատ Սպարապետը, Վարդան Արևելցին և մի շարք այլ հեղինակներ: Բացի այդ, նշյալ ժամանակաշրջանի պատմական անցուդարձերի մասին որոշ տեղեկություններ կան նաև ժամանակակից պատմագիտական գրականության մեջ: Հավելենք նաև, որ թեև Ամենայն հայոց կաթողիկոսարանը Հռոմկլայում էր գտնվում, սակայն այն Կիլիկիայի հայոց իշխանապետության կազմում չէր և կաթողիկոսարանի տարածքը ենթարկվում էր Հալեպի աթաբեկությանը: Թեև հանուն արդարության հարկ է նշել, որ նրա տիրակալները որևէ խոչընդոտներ չէին ստեղծում Ամենայն հայոց կաթողիկոսության գործունեության համար, սակայն իրավիճակը էականորեն փոխվեց 1173 թ. Ներսես Շնորհալու մահից հետո, երբ առաջ եկավ նոր կաթողիկոսի ընտրության խնդիրը:

Ըստ Հ. Միրզոյանի՝ Ներսես Շնորհալու կառավարման վերջին երեք տարիներին, հաշվի առնելով իր ծերունական հասակն ու առողջական տկար վիճակը, նա իր եղբոր որդուն՝ Գրիգոր Դ Տղային, նշանակել էր տեղապահ կամ փոխանորդ[1]: Նա նրան օժտել էր ազատ գործելու լայն իրավունքներով, որոշակի պայմանավորվածություն էր ձեռք բերվել, որ հենց նա պետք է իրեն փոխարիներ, որի մասին վկայություններ կան միջնադարյան պատմիչների երկերում: Ցավոք, դեպքերն այլ ճանապարհով ընթացան:

Նախ տեսնենք, թե ինչ են այդ մասին նշում պատմիչները:

Այսպես, ըստ Սմբատ Սպարապետի տեղեկությունների՝ 1173 թ. Ներսես Շնորհալու կտակի համաձայն, կաթողիկոսական աթոռի որևէ պայքար չի եղել, այլ պարզապես արձանագրվում է, որ նրա մահից հետո եպիսկոպոսները և հոծ բազմությունը հայոց կաթողիկոսական աթոռնին բազմեցրել են Գրիգոր Դ Տղային. «*Եւ գրէր ի կտակն իւր և պատուէր տայր նստուցանել յաթոռ նորա զորդի եղբօրն իւր երիցագունի Վասլի զարքեպիսկոպոսն տէր Գրիգոր, մականուն Տղայ...*»[2]: Շարունակելով իր միտքը Սմբատ Սպարապետը նշում է, որ Գրիգոր Դ Տղան շատ խելացի անձնավորություն էր, հիանալի հռետոր, շատ լավ տիրապետում էր Հին և Նոր կտակարաններին[3]: Ինչպես նկատում ենք, հայոց սպարապետը բավականին քիչ տեղեկություններ է հաղորդում Ամենայն հայոց կաթողիկոսի ընտրության վերաբերյալ, որը հնարավորություն չի ընձեռում մեզ հետաքրքրող

---

[1] **Միրզոյեան Հ.**, Նորայայտ փաստեր Գրիգոր Տղայի կեանքի եւ գործունեութեան մասին // «Բանբեր Երևանի համալսարանի», 1996, թիվ 3, էջ 84: Գրիգոր Դ Տղայի և Գրիգոր Ապիրատի միջև մղված պայքարի մասին տե՛ս նաև՝ **Հովհաննիսյան Ա.**, Մեծ իշխան Մլեհի եկեղեցական քաղաքականության շուրջ // «Բազմավէպ», 2013, թիւ 3-4, էջ 201-211:

[2] **Սմբատ Սպարապետ**, Տարեգիրք, Վենետիկ, 1956, էջ 191:

[3] Նույն տեղում:

խնդրի պարզաբանման համար կամ նա տեղյակ է եղել որոշ դեպքերի մանրամասնություններին, սակայն չի ցանկացել դրանք ներկայացնել:

Նշված իրադարձության վերաբերյալ առավել շատ տեղեկություններ է հաղորդում միջնադարյան ճանաչված պատմիչ Միքայել Ասորին: Նրա վկայությամբ՝ հայոց կաթողիկոս Ներսես Շնորհալու մահվան պահին նոր կաթողիկոսի ամենահավանական թեկնածու Գրիգոր Դ Տղան Հռոմկլայի հայրապետանոցում չէր, քանզի Ներսես հայրապետի հանձնարարությամբ մեկնել էր Կիլիկիա՝ հաշտեցնելու միմյանց դեմ պատերազմող Ռուբինյան և Հեթումյան իշխաններին, որից բնականաբար հայոց պետությունը շատ տուժում էր[1]: Եվ ահա, ըստ Միքայել Ասորիի՝ Ներսես Շնորհալին մահվան մահճում կաթողիկոսական մատանին հանձնում է Գրիգոր Ապիրատին[2], ով ևս Պահլավունիների տոհմից էր և իր մյուս եղբոր՝ Շահանի որդին էր: Բնականաբար, նա նույնպես կարող էր զբաղեցնել Ամենայն հայոց հայրապետի պաշտոնը: Նմանատիպ տեղեկություններ կան նաև այլ հեղինակների մոտ: Կարո՞ղ ենք արդյոք վստահել Միքայել Ասորու տեղեկություններին:

Կարծում ենք, որ Միքայել Ասորին բավական ստուգապատում հեղինակ է և հետագա դեպքերը ցույց տվեցին, որ նրա տեղեկությունները ճշմարիտ են: Այն, որ կաթողիկոսական պաշտոնի համար բավականին լուրջ պայքար է ընթացել, որոշակի տեղեկություններ կան նաև հայկական այլ սկզբնաղբյուրներում: Մասնավորապես, այդ մասին են վկայում Վարդան Արևելցին, ում համոզմամբ՝ Գրիգոր Դ Տղան հայոց կաթողիկոսական աթոռին է բազմել Հալեպի աթաբեկ Նուր ադ-Դինի միջամտության արդյունքում, ինչպես նաև Սամվել Անեցու երկը շարունակողներից մեկը, ով ևս հաստատում է, որ Գրիգոր Դ Տղան հայոց կաթողիկոսական աթոռին է բազմել Մլեհ իշխանապետի միջնորդությամբ և Նուր ադ-Դինի հրամանով. *«Եկն էրէց եղբաւր որդի վայելչագեղն Գրիգորիս եւ ի ձեռն Մլեհա իշխանին, հրամանաւ եւ ուժով Նորադին ամիրային եհան զնա եվ նստաւ ինքն»*[3]:

Փաստորեն, ըստ միջնադարյան պատմիչների վկայության՝ հայոց կաթողիկոսի ընտրության հարցում առաջին անգամ իր միջամտությունն է ցուցաբերել Հալեպի աթաբեկը՝ Նուր ադ-Դինը, որը հավանաբար կապված էր հայոց իշխանապետի հետ, քանզի հայտնի փաստ է, որ Մլեհ Ռուբինյանը և Հալեպի աթաբեկ Նուր-ադ-Դինը դաշնակիցներ էին:

---

[1] **Օրմանյան Մ**., նշվ. աշխ., այուն 1693:

[2] **Միքաել Ասորի**, Ժամանակագրութիւն հայոց, Երուսաղէմ, 1870, էջ 472:

[3] **Սամվել Անեցի** և **Շարունակողներ**, Ադամից մինչև 1776 թվականը, աշխատասիրությամբ Կ. Մաթևոսյանի, Երևան, 2014, էջ 231:

Գրիգոր Դ Տղայի բացակայության պայմաններում կաթողիկոսի գործառույթներն անցնում էին Գրիգոր Ապիրատին, թեև դրանով, իհարկե, չի ավարտվում հայոց կաթողիկոսի ընտրության հարցը։ Հայտնի է, որ երբ Գրիգոր Դ Տղան վերադառնում է Կիլիկիայից, Հռոմկլայում նրան չեն թույլատրում ներս մտնել բերդաքաղաք։ Դա առաջ է բերում վերջինիս դժգոհությունը, և ո՞ւմ պետք է նա դիմեր, եթե ոչ հայոց մեծ իշխանապետ Մլեհ Ռուբինյանին՝ իր իրավունքները վերականգնելու համար, քանզի մի կողմից վերջինս Կիլիկիայի իշխանապետն էր, իսկ մյուս կողմից՝ իր քրոջ ամուսինը։ Եվ ընդհանրապես, դժվար է պատկերացնել, որ XII դարի 70-ական թվականների առաջին կեսերին հնարավոր էր առանց Մլեհ Ռուբինյանի լուծել հայությանը հուզող որևէ կարևոր հարց։ Թեև հետաքրքիրն այն հանգամանքն է, որ 1173 թ. Մլեհ Ռուբինյանը, գտնվելով իր իշխանության փառքի գագաթնակետին, անմիջապես ռազմական գործողությունների չդիմեց, այլ նախ գնաց Հալեպ՝ աթաբեկ Նուր ադ-Դինի մոտ, վերջինիս հետ համաձայնեցրեց իր գործողությունները և նոր անցավ գործնական քայլերի։ Այդ մասին Միքայել Ասորին նշում է. «*Եւ յորժամ լուաւ զայն աւագն. եկն ի կլայն կաթողիկոսութեան, և ոչ թողին ըզնա ի բերդն. և նա գնաց դարձաւ առ փեսայն իւր առ պարոն Մլեհն. և Մլեհն էառ զնա և տարաւ առ Նորադինն, և նորին օգնութեամբ՝ եմոյծ զգա ի Հռոմկլայն. և նստաւ յաթոռ հայրապետութեան հորեղբօրն՝ Գրիգոր անուն...*»[1]։ Թեև պատմիչը նշում է, որ Մլեհ Ռուբինյանը Նուր ադ-Դինի օգնությամբ է իրականացրել Հռոմկլայի գրավումը և այդ պաշտոնը հանձնել Գրիգոր Դ Տղային, սակայն կարծում ենք, որ Հալեպի տիրակալը միայն հավանություն է տվել հայոց իշխանապետի քայլերին և չի մասնակցել այդ արշավանքին, քանզի 1173 թ. Մլեհ Ռուբինյանը գտնվում էր իր փառքի գագաթնակետին և իր սեփական ուժերով կարող էր լուծել այդ խնդիրը։

Կարծում ենք, հայոց իշխանապետի քաղաքականությունը խարսխվում էր այն գործոնի վրա, որ թեև տվյալ ժամանակաշրջանում նա հզոր միապետ էր և Նուր ադ-Դինի դաշնակիցը, սակայն Հռոմկլայի կաթողիկոսարանի տարածքը ենթարկվում էր Հալեպի աթաբեկությանը։ Ամենայն հավանականությամբ, Մլեհ Ռուբինյանը հենց այդ պատճառով է որոշել համաձայնեցնել իր գործողությունները Հալեպի աթաբեկի հետ և նոր միայն անցել գործնական քայլերի։ Այդ մասին է վկայում նաև Վարդան Արևելցին, ով ևս փստում է, որ Գրիգոր Դ Տղան կաթողիկոսական աթոռին է բազմել Հալեպի տիրակալ Նուր ադ-Դինի միջամտությամբ և համաձայնությամբ. «*Առնու զքօղն Գրիգոր եղբօրորդի իւր ձեռնտութեամբ Նորադ-*

[1] Նույն տեղում։

նին»[1]: Այս մասին մի տեսակետ է հայտնում նաև ժամանակակից հետազոտողներից Վ. Վարդանյանը. կաթողիկոսական գահանիստ Հռոմկլան Նուր ադ-Դինի ամիրայության սահմաններում էր, ուստի հնարավոր է, որ Գրիգոր Դ-ի և ամիրայի միջև առկա էր որոշակի մերձակցություն, առանց որի հնարավոր չէր վերջինիս կողմից Գրիգոր Դ-ին սատարելը[2]:

Ի վերջո, Կիլիկիայի իշխանապետ Մլեհ Ռուբինյանը հսկայական զորքերով շարժվում է Հռոմկլայի բերդաքաղաքի ուղղությամբ, գրավում ամրոցը, գահընկեց անում Գրիգոր Ապիրատին և կաթողիկոսական աթոռին բազմեցնում Գրիգոր Դ Տղային[3], ով պատմության մեջ հայտնի է որպես Գրիգոր Դ Տղա կաթողիկոս անունով (1173-1193): Սա Հռոմկլայի կաթողիկոսարանում առաջին դեպքն էր, երբ Ամենայն հայոց կաթողիկոսի պաշտոնին բազմում էին ռազմական ուժի միջոցով: Նշենք նաև, որ նշյալ իրադարձության մասին որոշակի տեսակետներ կան նաև ժամանակակից գիտական գրականության մեջ:

Այսպես՝ 1173 թ. կաթողիկոսության ընտրությանն անդրադառնում է XVIII դարի ականավոր պատմաբան Միքայել Չամչյանը: Նա նշում է, որ որևէ պայքար չի ընթացել և բավարարվում է նշելով, որ Գրիգոր Դ Տղան առանց միջամտության բազմել է հայոց հայրապետական աթոռին[4]: Նշենք, որ այս տեսակետը միակը չէ, նմանատիպ կարծիք է հայտնում նաև Մ. Օրմանյանը: Նրա համոզմամբ՝ կաթողիկոսական աթոռի համար ոչ մի պայքար տեղի չի ունեցել, այլ պարզապես Գրիգոր Ապիրատը ժամանակավորապես վարել է Ամենայն հայոց կաթողիկոսի գործառույթները մինչև Գրիգոր Դ Տղայի վերադարձը[5]: Դժվար է համաձայնվել նշյալ հետազոտողների առաջադրած այս տեսակետի հետ, քանզի եթե իրականում Գրիգոր Ապիրատը ժամանակավորապես է իրականացրել հայոց կաթողիկոսի գործառույթները, ապա ինչո՞ւ չպետք է թույլատրեին Գրիգոր Դ Տղային մտնել Հռոմկլայի բերդաքաղաք, և ինչո՞ւ պետք է Մլեհ Ռուբինյանը Նուր ադ-Դինի աջակցությամբ կիրառեր ռազմական ուժ:

Ժամանակակից հետազոտողներից մեզ հետ համամիտ է Ա. Հովհաննիսյանը, ով բավական խորությամբ հետազոտելով Կիլիկիայի հայկական պետության քաղաքական և եկեղեցական մի շարք անցուդարձերի պատմությունը՝ այն համոզմունքն է հայտնում, որ իրոք 1173 թ. կաթո-

---

[1] **Վարդան Արևելցի**, Տիեզերական պատմություն, Վենետիկ, 1862, էջ 132:

[2] **Վարդանյան Վ.**, Պահլավունիները հայոց պետականության և հոգևոր անաղարտության պահապաններ, Երևան, 2008, էջ 156:

[3] Գրիգոր Դ . Տղան նաև Կիլիկիայի հայոց իշխանապետ Մլեհ Ռուբինյանի տիկնոջ եղբայրն էր:

[4] **Չամչյան Մ.**, Հայոց պատմություն, սկզբից մինչև 1784 թվականը, Երևան, 1984, էջ 111:

[5] **Օրմանյան Մ.**, նշվ. աշխ., այուն 1693-1694:

ղիկոս Ներսես Շնորհալու մահից հետո Ամենայն հայոց կաթողիկոսի պաշտոնի համար բավական լուրջ և անզիջում պայքար է ծավալվել Պահլավունիների գերդաստանի երկու նշանավոր ներկայացուցիչների միջև[1], և այդ խնդիրը կարգավորվել է միայն Կիլիկիայի հայոց իշխանապետ Մլեհ Ռուբինյանի միջամտությունից հետո։ Ա. Հովհաննիսյանի տեսակետը պաշտպանում է նաև Վ. Տեր-Ղևոնդյանը[2]։

Ի վերջո, հարկ է փաստել, որ 1173 թ. թե՛ Հալեպի աթաբեկությունը և թե՛ Կիլիկիայի հայկական պետությունը ակտիվ դերակատարում են ունեցել Հռոմկլայում ընթացող Ամենայն հայոց կաթողիկոսի ընտրության հարցում, և հենց այդ միջամտության արդյունքում է Գրիգոր Դ Տղան բազմել կաթողիկոսական աթոռին։

2. ԳՐԻԳՈՐ Դ ՏՂԱՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ

Գրիգոր Դ Տղա կաթողիկոսի մասին բարձր գնահատականներ են տալիս ժամանակակից մի շարք հետազոտողներ, որոնց կարծիքով այս ընտրությունը բավական արդարացի էր և ճշգրիտ։ Դրան է վկայում Հ. Միրզոյանը, ով ակնածանքով է վերաբերվել հայոց նորընծա հայրապետին։ Նա գտնում է, որ Գրիգոր Դ Տղան այն սակավաթիվ միջնադարյան գործիչներից է, որոնց համբավը իրենց կենդանության օրոք դուրս է եկել տեղական շրջանակներից և ձեռք բերել միջազգային ճանաչում[3]։ Նրա պնդմամբ՝ Կիլիկիայի հայոց իշխանապետը աջակցել է ժամանակի լավագույն և արժանի հոգևորականներից մեկին, որի հետ իհարկե դժվար է չհամաձայնվել, քանզի Գրիգոր Դ Տղան մինչ կաթողիկոս դառնալը արդեն ճանաչված գիտնական և հոգևորական էր և կաթողիկոս ընտրվելուց հետո աչքի է ընկել տարբեր բնագավառներում, վարել է հայանպաստ քաղաքականություն և իր արժանի տեղն է զբաղեցնում Ամենայն հայոց հայրապետների շարքում։

Այստեղ ծագում է մեկ հարց ևս. արդյո՞ք Մլեհ Ռուբինյանը իրավունք է ունեցել միջամտելու Ամենայն հայոց կաթողիկոսի ընտրություններին, քանզի հայտնի փաստ է, որ Ամենայն հայոց կաթողիկոսի ընտրությունը իրականացվում է եպիսկոպոսների և աշխարհականների կողմից։ Բացի այդ, Գրիգոր Ապիրատը չէր ստացել նաև հայ իշխանների և Մլեհ Ռուբինյանի համաձայնությունը, ինչի պատճառով իր դեմ դուրս ե-

---

[1] **Հովհաննիսյան Ա.**, Հայոց եկեղեցին կիլիկյան շրջանում, Երևան, 2018, էջ 61-64։

[2] **Տեր-Ղևոնդյան Վ.**, Կիլիկյան Հայաստանը և Մերձավոր Արևելքի արաբական պետությունները 1145-1226 թվականներին, Երևան, 1994, էջ 68։

[3] **Միրզոյան Հ.**, նշվ. աշխ., էջ 77։

կավ հայոց իշխանապետը։ Մյուս կողմից միջնադարյան սկզբնաղբյուրներում չի պահպանվել որևէ տեղեկություն առ այն, որ Ներսես Շնորհալու մահից հետո եղել է հայ բարձրաստիճան հոգևորականների և աշխարհականների ժողով, հետևաբար՝ Գրիգոր Ապիրատը իրավունք չուներ արգելել կաթողիկոսի գլխավոր թեկնածուներից մեկին մտնել Հռոմկլայի կաթողիկոսարանի շենքը, ընդ որում՝ մի անձնավորության, ով վերջին տարիներին վարում էր հայոց կաթողիկոսարանի գրեթե բոլոր կարևոր գործերը։ Բացի այդ, եթե հետազոտենք Հռոմկլայի և Սսի կաթողիկոսարանների պատմությունը, ապա հստակ երևում է, որ Կիլիկիայի հայոց պետությունը գրեթե միշտ միջամտել է Ամենայն հայոց կաթողիկոսի համար մղվող պայքարին և փորձել այդ կարևոր ու պատասխանատու պաշտոնին բազմեցնել այնպիսի հոգևորականի, որի աթոռակալման ժամանակաշրջանում խնդիրներ չծագեին պետության և եկեղեցու հարաբերություններում։ Իրենց հերթին թե՛ հայոց կաթողիկոսները և թե՛ եպիսկոպոսները գրեթե միշտ կարևոր դեր են կատարել Կիլիկիայի պետական-քաղաքական համակարգում և բացի հոգևոր ոլորտի գործունեությունից՝ վարել նաև մի շարք աշխարհիկ պաշտոններ ևս։

Թեև Մլեհ իշխանապետի միջամտությամբ Գրիգոր Ապիրատը հեռացվեց հայրապետական պաշտոնից, սակայն, ըստ Վարդան Արևելցու՝ որոշեցին նրան չնեղացնել և նշանակեցին Կիլիկիայի Լամբրոնի և Կեսարիայի, ինչպես նաև Անտիոքի թեմերի առաջնորդի պաշտոնում. «*Եւ միւս եղբօրորդին Գրիգորէս, որ և Ապիրատ կոչէր, չոգաւ ի Լամբրոնն և խնամէր զՏարսօնի վիճակն*»[1]։ Այլ կերպ ասած՝ հաշվի առնելով նրա ունակությունները, ինչպես նաև այն հանգամանքը, որ վերջինս ևս Պահլավունիների գերդաստանի ներկայացուցիչն է և եպիսկոպոս, նրան մասնակից դարձրին հոգևոր իշխանության կառավարմանը։ Ըստ Միքայել Ասորու՝ միայն իր միջամտության շնորհիվ է Գրիգոր Ապիրատը նշանակվել այդ պատասխանատու պաշտոնին[2]։

Այս բանակցային գործընթացի մասին որոշակի տեսակետներ են առկա նաև մասնագիտական գրականության մեջ։ Մասնավորապես, Ղևոնդ Ալիշանը մի տեսակետ է հայտնում, ըստ որի՝ հայոց իշխանապետ Մլեհը խոստացավ Գրիգոր Ապիրատին, որ Գրիգոր Դ Տղայից հետո ինքն է լինելու Ամենայն հայոց կաթողիկոսը[3], թեև հեղինակը ցույց չի տալիս աղբյուրը, սակայն կարելի է համաձայնվել հայ մեծանուն հայագետի առաջ քաշած տեսակետի հետ, քանզի հայոց իշխանապետը փորձել է նման

---

[1] **Վարդան Արևելցի**, էջ 132։

[2] **Միքաել Ասորի**, Ժամանակագրութիւն հայոց , Երուսաղէմ, 1871, էջ 471-472։

[3] **Ալիշան Ղ.**, Սիսուան, Վենետիկ, 1885, էջ 57։

քայլով բարիդրացիական հարաբերություններ պահպանել նաև Գրիգոր Ապիրատի հետ: Իհարկե Գրիգոր Դ Տղայի մահից հետո Գրիգոր Ապիրատը չդարձավ հայոց հայրապետ, բայց այնուամենայնիվ XII դարի 90-ական թվականներին, իսկ ավելի կոնկրետ՝ 1194 թ., կաթողիկոս Գրիգոր Քարավեժի մահից հետո բազմեց Ամենայն հայոց կաթողիկոսի աթոռին և 1198 թ. անձամբ օծեց Լևոն Մեծագործին՝ դառնալով Պահլավունիների նշանավոր գերդաստանի վերջին կաթողիկոսը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հոդվածը նվիրված է XII դարի երկրորդ կեսի հայ առաքելական եկեղեցու պատմության ամենակարևոր խնդիրներից մեկի՝ 1173 թ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի ընտրության հարցին: Միջնադարյան սկզբնաղբյուրների և ժամանակակից պատմագիտության հիման վրա ներկայացրել ենք այն բոլոր կարևոր իրադարձությունները, որոնք առնչվում են Ներսես Շնորհալու մահից հետո տեղի ունեցած կաթողիկոսական ընտրությանը: 1173 թ. կաթողիկոսական աթոռի համար բավականին լուրջ պայքար է մղվել Պահլավունիների նշանավոր գերդաստանի երկու ականավոր հոգևորականների՝ Գրիգոր Դ Տղայի և Գրիգոր Ապիրատի միջև: Այս պայքարում մեծ դեր են ունեցել Կիլիկիայի հայոց իշխանապետ Մլեհ Ռուբինյանը, ինչպես նաև Հալեպի տիրակալ Նուր ադ-Դինը: Կիլիկիայի աշխարհիկ իշխանությունը իրավունք է ունեցել միջամտելու Հռոմկլայի կաթողիկոսական աթոռի համար մղվող պայքարին և մասնակցել է մեր ժողովրդի կյանքում մեծ դեր կատարող հոգևոր իշխանության գահակալի ընտրություններին: Այնուհանդերձ, հայոց իշխանապետի կամքով կաթողիկոսության թեկնածու Գրիգոր Ապիրատին ևս պաշտոն է տրվել, որպեսզի նա ևս կարողանա իր ծառայությունները մատուցել Հայ առաքելական եկեղեցուն:

Нелли Жамкочян , Один эпизод из истории выборов армянского католикоса 1173 года - Исследование посвящено одной из важнейших проблем истории Армянской Апостольской Церкви второй половины XII века – вопросу об избрании Католикоса Всех Армян 1173 г. На основе средневековых источников и современной исторической науки предпринята попытка представить основные важные события выборов католикоса, проведенные после смерти Нерсеса Шнорали. В 1173 г. развернулся довольно серьезный спор между двумя священнослужителями известного княжеского рода Пахлавуни – Григором Тха и Григором Апиратом. Освещены роли ар-

мянского верховного князя Млеха Рубиняна и правителя Алеппо Нур ад Дина в этом конфликте. Рассмотрен также вопрос вмешательства светского правительства Киликии в борьбу за ромклайский католический престол. Органы государственного управления имели право на участие в выборах руководящего органа духовной власти, занимающей важное место в жизни нашего народа. И, наконец, мы показали, что по воле армянского верховного князя кандидат в католикосы Григор Апират также получил определенную должность, чтобы иметь возможность служить Армянской Апостольской церкви.

Nelly Zhamkochyan, A Fragment From the History of the Election of the Armenian Catholicos in 1173 - This study is about one of the most important problems in the history of the Armenian Apostolic Church in the second half of the 12th century, the issue of the election of the Catholicos of All Armenians in 1173. Based on medieval sources and modern historical studies, the article presents the main important events of the election of the Armenian Catholicos held after the death of Nerses Shnorhali. In 1173, a rather serious dispute unfolded between two clergy of the famous princely family of Pahlavuni, Grigor Tkha and Grigor Apirat. The study presents also the roles of the Armenian Grand Prince Mleh Rubinyan and the ruler of Aleppo Nur ad Din in this conflict. The question of the intervention of the secular government of Cilicia in the struggle for the Rumkale Catholicosate throne is also considered. We concluded that the organs of state administration had the right to participate in the elections of the leading body of spiritual authority, which occupied an important place in the life of our people. And finally the study outlines that by the will of the Armenian supreme prince, the candidate for Catholicos Grigor Apirat also received a certain position in order to serve the Armenian Apostolic Church.

Ուղարկվել է խմբագրություն 13.11.2022թ.
Գրախոսվել է 15.11.2022թ.
Ստորագրվել է տպագրության 20.11.2022թ.